

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Շիրադ-ն ՀՓ-ԷԱՃԱՊԶԲ-26/47 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	"Վերնաշապիկ՝ սպիտակ, դասական ձևի, կորպորատիվ ոճի, նախատեսված կորպորատիվ աշխատակիցների համար: Չափերը ճշգրտվում են պատվիրատուի կողմից տրամադրված չափագրման աղյուսակով: Օգտագործվող կտորը՝ T/C (TISI) 92% բամբակ, 8% սպանդեքս, Բամբակի նվազագույն պարունակությունը՝ 50%, Կտորի խտություն՝ 150-180 գ/մ², Կտորի նախնական մշակում՝ թելերի ամրացման և գունային կայունության ապահովման համար: Ոճը՝ դասական, ուղիղ կամ թեթև սեղմված ձևով: Թևքեր՝ կիսաերկար (միջին երկարություն), եզրագոտին՝ 4-5 սմ լայնությամբ, կենտրոնական հատվածում ճեղքով: Օձիք՝ ծալովի, պատրաստված սատինե գործվածքից՝ խտությունը 80-90 գ/մ²: Եզրագիծը մշակված է զարդակարով: Առջևի հատված՝ բաղկացած է երկու լանջափեղերից: Յուրաքանչյուր կողմ մշակված է մեկ կարճ և մեկ ուղղահայաց սեղմոնով: Լանջափեղքերի միացումը կատարվում է կոճակներով: Կոճակների շարքը քողարկված է 2-3 սմ լայնությամբ դարձով: Հետնամաս՝ մեկ կտորից: Գոտկային հատվածի ձևավորումն ապահովված է երկու ուղղահայաց սեղմոններով: Կարերը՝ երկակի, ամրացված յուրաքանչյուր կար մաքուր մշակված: Լանջափեղքերի ծայրերը մշակվում են մաքրակարով, ծալքով և զարդակարով: Կոճակներ՝ սպիտակ գույնի, տրամագիծը՝ 1 սմ, քանակը՝ 7-8 հատ: Կոճակները կարում են խաչաձև կարով՝ մեքենայական ամրացմամբ: Բոլոր կարերի ամրացումը կատարվում է ստանդարտ 301 կարի տեսակով: Ձախ կրծքավանդակի հատվածում տեղադրվում է «Հայփոստ» լոգոտիպը: Կիրառվող տեխնոլոգիան՝ ասեղնագործություն: Ասեղնագործման թելերը պետք է լինեն բարձրորակ պոլիեսթերային՝ գույնի կայունությամբ և մաշվածության դիմացկունությամբ: Յուրաքանչյուր պատրաստի արտադրանք փաթեթավորվում է առանձին

	Թափանցիկ պոլիէթիլենային տոպրակով: Տոպրակի վրա պարտադիր նշվում է՝ չափսը, նյութի կազմը, լվացման եղանակը, արտադրամասի անվանումը: Պատվիրատուի կողմից նախնական հաստատման համար ներկայացվում է մեկ նմուշային արտադրանք: "
--	--

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Сиршџ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом <Ф-ЕЦДЦТДР-26/47 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	